ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Մանկավարժական հաղորդակցման կազմակերպումն արդի կրթական համակարգում՝ ժամանակակից միջոցների ու պայմանների համատեքստում»

Կատարող՝ Նոնա Մաթևոսյան

Ուս. հաստատություն՝ «Ալ.Համբարյանի անվան Թորոսգյուղի միջն. դպրոց » ՊՈԱԿ

Խումբ՝ Պատմություն

Ղեկավար ՝ Կարինե Ալեքսանյան

Գյումրի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..…… 3

Գլուխ 1. Մանկավարժական հաղորդակցման իրականացման պայմանները ՀՀ արդի կրթական համակարգում…….…… 4

Գլուխ 2. Հաղորդակցման խոսքային և ոչ խոսքային միջոցների ներգործությունը կրթական գործընթացում..……...…….……13

Եզրակացություն ……. 19

Օգտագործված գրականության ցանկ……...……..22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից տեղեկատվական հասարակությունը զարգանում է աննախադեպ արագությամբ: Անհամեմատ ավելի արագ են զարգանում գիտելիքները և կիրառություն գտնում կյանքում: Նման տեմպերով զարգացող հասարակության խնդիրն է համապատասխանեցնել կրթական համակարգը նոր պահանջներին, փոփոխել ուսումնական գործընթացի կազմակերպման կարծրատիպերը, կիրառել մանկավարժական նորագույն տեխնոլոգիաներ և ուսուցման նոր մեթոդներ:

Բարեփոխումների արդի փուլում արագ կողմնորոշվող, տարբեր իրավիճակներում ստեղծագործաբար լուծումներ գտնող, նախաձեռնող ու ինքնակատարելագործման ձգտող անձի ձևավորումը նախ և առաջ կախված է նրա հաղորդակցման կարողությունից:

Մեր օրերում գնալով ընդգծվում է հաղորդակցման արդյունավետ իրականացման հիմնախնդիրը, քանզի համացանցի դերի աճի, սոցիալական ցանցերի ընդլայնման, տեղեկատվության, նաև գիտելիքի ստեղծման ու արագ տարածման պայմաններում անհնար է որևէ արդյունքի հասնել առանց հաղորդակցման: Այս հիմնախնդրի լուծման առաջնաքայլը հաղորդակցման իրականացման շուրջ ուսումնասիրությունների կատարումն ու պատկերացումների հստակեցումն է:

Հաղորդակցման տարբեր դրսևորումները ուսումնասիրվել են դեռ վաղուց, իսկ 20–րդ դարի 70–80–ական թթ.–ին՝ որպես հատուկ գիտամանկավարժական հետազոտության առարկա հանդես է եկել մանկավարժական հաղորդակցումը, որի հետազոտության օբյեկտը կրթական հաղորդակցման նախապատրաստումը, իրականացումն ու արդյունքն է:

Տեղեկատվական հասարակության և նորագույն տեխնոլոգիաների ներդրման շրջանում առավել քան կարևորվում է մանկավարժական հաղորդակցման դերը դաստիարակության ու ուսուցման գործընթացի կազմակերպման, սովորողների անհատական զարգացման գործում: Կենդանի, անմիջական հաղորդակցման միջոցով իրագործվում է ոչ միայն կրթական, այլ նաև սոցիալական, մշակութային, բարոյական, գեղագիտական արժեքների փոխանցումը նոր սերնդին:

Հաղորդակցման ընթացքում և հաղորդակցման միջոցով է կատարվում ուսուցչի դաստիարակչական ներգործությունները իր սաների գիտակցության ու վարքի վրա:

Ուստի կարևոր է հետազոտությունների միջոցով պարզել մանկավարժական հաղորդակցման առանձնահատկությունները ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում, դիտարկել հաղորդակցման իրականացման ժամանակակից միջոցներն ու պայմանները՝ հանրակրթական գործունեության մեջ: Մանկավարժական հաղորդակցման իրականացման հիմքում ընկած են մի շարք նախադրյալներ, որոնք քննարկել ու վեր ենք հանել աշխատանքում:

Աշխատանքի նպատակը կրթության ոլորտում մանկավարժական հաղորդակցման առանձնահատկությունների և իրականացման ժամանակակից պայմանների ուսումնասիրումը, խնդիրների բացահայտումը և դրանց լուծման հնարավորությունների նախանշումն է:

Նպատակն իրականացնելու համար առաջադրված խնդիրները:

1. Բացահայտել մանկավարժական հաղորդակցման իրականացման պայմանները ՀՀ արդի կրթական համակարգում:

2. Հետազոտել կրթական գործընթացում հաղորդակցման նոր միջոցների և առցանց կրթական հարթակների կիրառման հնարավորությունները՝ արդյունավետ հաղորդակցման իրականացման տեսանկյունից:

3. Վերլուծել հետազոտության արդյունքները՝ նախանշելով մանկավարժական հաղորդակցման իրականացման հիմնախնդիրները ՀՀ հանրակրթական ոլորտում:

Աշխատանքն իրականացնելիս կիրառել ենք հետազոտության հետևյալ մեթոդները. գիտամեթոդական գրականության ուսումնասիրում, վերլուծություն, դիտում, ընդհանրացում, համեմատում, համադրում և այլն:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀՀ ԱՐԴԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հաղորդակցումը կրթական գործընթացի անհրաժեշտ պայմանն է, այն ձևավորում է անձի զարգացման եղանակները և պայմանավորում կրթական գործընթացի արդյունավետությունը: Հաշվի առնելով արդի հասարակական պահանջները, դիտարկել ենք հաղորդակցման հնարավորությունները ժամանակակից կրթության համակարգում:

Ի տարբերություն նախորդ՝ 20-րդ դարի, որը խորհրդանշեց աննախադեպ տեխնիկական ու տեխնոլոգիական զարգացում, 21-րդ դարում տեղի է ունենում անցում տեղեկատվական հասարակության, ուր որոշիչ են դառնում գիտելիքների ստեղծումն ու տարածումը: Եթե 20-րդ դարում կարևորվում էր երեխայի բոլոր հնարավորությունների բացահայտումն ու իրացումը, ապա 21-րդ դարում ժամանակակից հասարակությանն անհրաժեշտ է բոլոր հարաբերություններում ակտիվ, ստեղծագործաբար մտածող, նախաձեռնող, միաժամանակ ուրիշների իրավունքները հարգող, քաղաքակիրթ և զարգացած անձ, որը կարողանում է կառավարել ինչպես սեփական ներուժը, այնպես էլ արտաքին ազդեցությունները՝ դնելով նաև ինքնազարգացման խնդիր: 21-րդ դարում ինքնազարգացման ձգտող անձի ձևավորման նպատակով կրթական հաղորդակցման կազմակերպմանը ներկայացվում են նոր պահանջներ:

Անձի ինքնազարգացման հիմնահարցը առաջ է քաշվել դեռևս անտիկ դարաշրջանի փիլիսոփաների ուսմունքներում: Նոր հնչեղություն ստանալով Վերածննդի դարաշրջանում ձևավորված հումանիստական մանկավարժության մեջ՝ միայն 20-րդ դարում այն ձևակերպվեց որպես մանկավարժական գիտության հիմախնդիր, և, ինչպես նշում է Ա. Թոփուզյանը, «ձևավորվեց մանկավարժության նոր ուղղություն, որի բովանդակությունը անձի ազատ ինքնազարգացման խնդիրը դարձավ»[1]: Այսպես՝ հայ իրականության մեջ այդ ուղղության ներկայացուցիչներից են

[1] Թոփուզյան Ա., Երեխայի ինքնազարգացման հումանիստական պայմանները: Եր., «Զանգակ-97» հրատ., 2005, «Մանկավարժական միտք» գիտական հանդես, N 4, էջ 38:

Տ. Ռաշմաճյանը, որը «սովորեցնելու ճշմարիտ ճանապարհը»[2] համարում էր առողջ անհատի ձևավորումը, որը ունի անվերջ սովորելու ցանկություն, Հ. Հինդլյանը, որը կարևոր էր համարում այնպիսի անհատականության ձևավորումը, որն «ինքն իրեն կառավարելու կարողություն ունենա»[3], Բ. Մինասյանը, որը նշում էր, որ «առողջ դաստիարակությունն այն է, որ պատրաստում է ինքնուրույն, ազատ ու ազգային անհատներ»[4] :

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այսօր տեսաբաններն ու մանկավարժները հակված են մանկավարժական հաղորդակցման նոր մոդելի ձևավորմանը, որը կարելի է ներկայացնել «կողմնորոշող սուբյեկտ- ինքնազարգացող սուբյեկտ» մոդելի տեսքով:

Միջանձնային հաղորդակցման այս մոդելում մանկավարժը հանդես է գալիս որպես կողմնորոշող սուբյեկտ և ուղղորդում է սովորողին դեպի ինքնազարգացում: Մանկավարժի՝ որպես կողմնորոշող սուբյեկտի գաղափարը բխում է Կ. Ռոջերսի հումանիստական տեսությունից, որում նա մանկավարժին համարում է հաղորդակցման ֆասիլիտատոր (անգլ. Facilitator- մոդերատոր, կազմակերպող, օգնական, որը ձգտում է չընդգծել իր դերը և նպաստում է խմբի անդամների ինքնակազմակերպմանը)[5]: Մանկավարժը ուղղորդում ու վերահսկում է սովորողի հաղորդակցական ակտիվությունը՝ կողմնորոշելով դեպի ինքնազարգացում:

Կրթական համակարգում և, հատկապես դպրոցում, «կողմնորոշող սուբյեկտ- ինքնազարգացող սուբյեկտ» մոդելի գործառնության համար բավարար չեն միայն հասարակական պահանջներն ու մանկավարժական գիտատեսական հիմքերի մշակումը: Անհրաժեշտ է նոր ուղիների ու տեխնոլոգիաների մշակում և ամրագրում կրթակարգով, այսինքն՝ անհրաժեշտ է պետական հոգածություն, որն ապահովվում է կրթական քաղաքականությամբ:

---

[2] Հայ մանկավարժներ (19-րդ դար): Կազմող և խմբագրող՝ Շավարշյան: Եր., Հայպետուսմանկ հրատ., 1961, գիրք Բ, էջ 577:

[3] Հայ մանկավարժներ (19-րդ դար): Կազմող և խմբագրող՝ Շավարշյան: Եր., Հայպետուսմանկ հրատ., 1961, գիրք Բ, էջ 589:

[4] Մանկավարժության պատմության քրեստոմատիա. Անտիկ դարեր.Միջին դարեր. Նոր դարաշրջանի սկիզբ: Մանկավարժական բարձրագույն դպրոցների համար/ Կազմեց՝ Ի. Ֆ. Ակադովսկի, 1-ին հատոր: Երևան, 1936, էջ 258:

[5] Реан А. А., Психология личности. Социализация, поведение, общение. М.: АСТ, 2007, с.74-76.

Հայաստանի կրթական համակարգում մանկավարժական հաղորդակցման մոդելն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է հաշվի առնել մի քանի առաջնային գործոններ:

Նախ Հայաստանը՝ որպես հետխորհրդային երկիր, միտված է ազգային նոր մտածողության ձևավորմանը ու մեծ ուշադրություն է դարձվում ազգային արժեքային համակարգի վերահաստատմանն ու հետագա պահպանմանը: Հաջորդը՝ մշակվել է եվրոպական կրթական միասնական տարածքում ինտեգրվելու քաղաքականություն, ինչն առաջ է բերել մի շարք վերափոխումներ կրթական ոլորտում: Սակայն ամենադժվար փոփոխության ենթարկվող գործոնն այն է, որ մեր դպրոցներում դեռևս գործում է խորհրդային ժամանակներից ժառանգած մոդելը, ընդ որում՝ խորհրդային կրթական համակարգում գերիշխող է եղել «սուբյեկտ-օբյեկտ» մոդելը, գերակշռել է խիստ կանոնակարգն ու հսկողությունը աճող սերնդի գիտակցության վրա, որում էլ առաջատար է մանկավարժի հեղինակային ոճը, և որպես կանոն դասավանդողները խուսափում են վերափոխումներից:

Ինչպես նշվում է ՀՀ կրթական բարեփոխումների վերաբերյալ ազգային զեկույցում. «Հայաստանի կրթության համակարգը ճկուն չգտնվեց նոր իրողություններին արձագանքելու հարցում: Արդյունքում կրթական հաստատությունները շարունակում են իրագործել գոյություն չունեցող խորհրդային գաղափարախոսության նպատակները: Մասնավորապես գերիշխում է սովորողներին պատրաստի գիտելիքներ մատուցելու մոտեցումը, այլ ոչ թե սովորողներին գիտելիքների կառուցմանը մասնակից դարձնող ուսուցումը»[6]: Իսկ որպեսզի սովորողները մասնակից դառնան գիտելիքների ստեղծմանը, նրանք պետք է ակտիվ լինեն կրթական հաղորդակցման գործընթացում: Այսինքն՝ ժամանակակից հասարակական պահանջներով ձևավորված է կրթական համակարգում մանկավարժական հաղորդակցման նոր մոդելի գործառնության անհրաժեշտություն, որն ինչպես և նշվեց, չունի կիրառության անհրաժեշտ պայմաններ ՀՀ կրթական համակարգում, հատկապես դպրոցում:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ են ոչ միայն նոր տեխնոլոգիաների որոնում, գիտական հիմունքների մշակում, այլ նաև

[6] Կրթական վերափոխումները Հայաստանում: Մարդկային զարգացման ազգային զեկույց-2006: Երևան, 2007, էջ 21:

հաղորդակցման փորձի ձևավորում, կամ ինչպես Ա. Բոդալյովն է անվանում «հաղորդակցական ակտիվություն»: «Հաղորդակցման ակտիվության մեջ դրսևորվում է անձը, ձևավորվում է նրա վերաբերմունքը հաղորդակցման նպատակի, բովանդակության և արդյունքի նկատմամբ, անձը ձգտում է ճանաչողական-կամային ջանքեր ներդնել տարբեր խնդիրների լուծման համար»[7]:

Կարծում ենք՝ հաղորդակցման նոր մոդելի գործառնության պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է կրթության համակարգի բոլոր տարրերի վերափոխում, որը պետք է սկսել դեռ մանկավարժական կադրեր պատրաստող բուհերից, վերապատրաստող օղակների արդիականացումից:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ապագա մանկավարժների և դպրոցում դասավանդողների հաղորդակցաբանական պատրաստվածության խնդրին, որպեսզի մանկավարժը կարողանա կիրառել հաղորդակցման բոլոր հնարավորությունները՝ նպաստելով աշակերտների հաղորդակցական ակտիվության զարգացմանը: Միայն այդ ճանապարհով հնարավոր կլինի կրթության համակարգում և հատկապես դպրոցում, հասնել հաղորդակցման մոդելի համապատասխանեցման ժամանակակից պահանջներին:

Դիտարկելով մանկավարժական, հոգեբանական ու սոցիոլագիական ուսումնասիրությունները, կարող ենք հաստատել, որ ինքնազարգացող անձի ձևավորման հիմնական ուղին միջանձնային հաղորդակցումն է:

Անձի ձևավորման և զարգացման գործընթացում հաղորդակցման արդյունավետ կազմակերպումը, ինքնազարգացման հնարավորությունների բացահայտումն ու խթանումն առավել անհրաժեշտ է հատկապես կրտսեր դպրոցում, քանզի զարգացման ձգտումն առավել բնորոշ է մանկության տարիքին: Եթե այդ ժամանակ չեն ստեղծվում զարգացման համապատասխան պայմաններ, հետագայում դրանք երկար ժամանակով արգելափակվում են:

Ձևավորվում է հիմնահարց. ինչպե՞ս անել, որ բոլոր սովորողները լինեն ակտիվ կամ ինչպե՞ս խթանել անձի հաղորդակցական ակտիվությունն ու զարգացնել այն:

Հիմնահարցի լուծման համար պետք է հաշվի առել որոշակի ներքին և արտաքին գործոններ: Ներքին գործոնները սովորողի ունեցած հաղորդակցական

---

[7] Бодалев А. А., Психология общения. 2-е изд. М.: Московский психолого-социальный институт, 2002, с. 17.

կարողություններն ու հմտություններն են, արտաքին գործոնները հաղորդակցման կազմակերպման եղանակները, պայմանները, դասավանդողի մասնագիտական պատրաստվածությունն ու գործիմացությունն են:

Յուրաքանչյուր երեխա նախ և առաջ հաղորդակցվում է՝ համապատասխան իր ֆիզիոլոգիական զարգացման հնարավորություններին (սովորողը կարող է ունենալ ֆիզիկական զարգացման շեղումներ): Երեխայի հաղորդակցական հնարավորությունները պայմանավորված են նաև նրա հոգեկան առանձնահատկություններով՝ պահանջմունքներով, հետաքրքրություններով, ձգտումներով, հույզերով, դիրքորոշումներով:

Դպրոցական տարիքի աշակերտի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները պահանջում են ակտիվ ու տարատեսակ գործողությունների իրականացում: Այնինչ, ժամանակակից կրթական գործընթացում սովորողը 45 րոպե ստիպված է անշարժ նստել միևնույն տեղում և կատարել նույնատիպ աշխատանք: Արդյունքում սովորողի մոտ առաջանում է ձանձրույթ, ժամանակի ընթացքում դպրոցից ու դասերից հիասթափություն է նկատվում:

Կարևոր է, որ սովորողը ուսուցումը ընկալի ոչ թե որպես պարտադրված գործունեություն, այլ որպես իր համար ծանոթ ու հասկանալի իրադրություն, ուր ինքը ևս կարող է որոշումներ ընդունել: Դա չի նշանակում, որ ուսուցումը պետք է վերածվի, ասենք խաղի: Պարզապես այն պետք է կարգակերպել այնպես, որ աշակերտը լինի ակտիվ, ստեղծագործ ու նախաձեռնող, ինչպես խաղում:

Դպրոցներում մեր դիտարկումների ու աշակերտների հետ զրույցների ընթացքում պարզեցինք, որ երեխաներն ավելի հեշտությամբ են ընկալում դասը, երբ նոր տեխնոլոգիաներով ու խաղերով իրենք են վերլուծում նոր թեման՝ ուսուցչի ուղորդմամբ, քան երբ ուսուցիչը զուտ բացատրում է խոսքով:

Այսպիսով՝ անձի հաղորդակցական ակտիվության կարևոր բաղադրիչը նրա հաղորդակցական պատրաստվածությունն է՝ հաղորդակցական գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

ՀՀ հանրակրթության պետական կրթակարգում սահմանվում են հաղորդակցական այն պարտադիր կարողություններն ու հմտությունները, որոնց պետք է տիրապետի դպրոցականը: Ըստ կրթակարգի ենթաբաղադրիչի՝

ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող պետք է ձեռք բերի հաղորդակցական հետևյալ կարողություններն ու հմտությունները[8].

ա) լսել, ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել

բ) բանավիճել, բանավոր և գրավոր տրամաբանված խոսք կառուցել

գ) ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած տերմինները (եզրերը), հասկացությունները և արտահայտությունները

դ) հասկանալ և ճիշտ օգտագործել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները

ե) օգտվել ժամանակակից հաղորդակցման տեխնիկական միջոցներից և այլն:

Փորձը ցույց է տալիս, որ աշակերտների հիմնական մասը միջոցառումների ժամանակ ելույթ ունենալիս կաշկանդված է, ինչը խոսում է հաղորդակցական կարողությունների բացակայության մասին: Այսպես՝ եթե երեխան ձեռք է բերում հաղորդակցման համար անհրաժեշտ կարողություններ, ապա կարողանում է մասնակցել տարբեր քննարկումների, ակտիվորեն ու ազատ արտահայտել սեփական կարծիքը, անկաշկանդ ինքնադրսևորվել, հանդես գալ տարբեր հիմնավորումներով, չկաշկանդվել տարատեսակ փոխհարաբերություններում և ձեռք բերել նոր գիտելիքներ ու հմտություններ:

Հաղորդակցական ակտիվության ձևավորման ներքին գործոններից պակաս կարևոր չեն արտաքին գործոնները՝ միջավայրն ու պայմանները, որտեղ տեղի է ունենում հաղորդակցումը, արտաքին խթանիչները, հաղորդակցվողների անձնային հատկանիշները, ինչպես նաև ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունը:

Մանկավարժական միջավայրում գերիշխում է այն կարծիքը, որ ուսուցիչները տիրապետում են հաղորդակցական ընդհանուր կարողություններին և սովորողների մոտ դրանց ձևավորման համար անհրաժեշտ միջոցներին ու ձևերին: Սակայն գործնականում այդ պնդումները հերքվում են, քանի որ հաճախ ենք ականատես լինում այն փաստին, որ ուսուցիչների մոտ ոչ բավարար մակարդակով են ձևավորված հաղորդակցական ընդհանուր կարողությունները: Ուստի զարմանալի չէ, որ աճող սերնդի հաղորդակցման մշակույթի ձևավորումը նույնպես անբավարար հիմքերի վրա է, քանի որ անհնար է փոխանցել մի բան, որը բացակայում է, կամ թերի է:

---

[8] Հանրակրթական պետական կրթակարգ: Երևան, «Անտարես» հրատ., 2004, էջ 27:

Դիտարկումները ցույց են տալիս, որ ուսուցիչների գիտելիքները հաղորդակցական ժամանակակից կարողությունների մասին թերի են, նրանք լավ չեն տիրապետում հիմնական ձևերին ու մեթոդներին, որոնք անհրաժեշտ են սովորողների մոտ հաղորդակցման հմտությունների ձևավորման համար: Ուսուցիչների մեծ մասն էլ խոստովանում է, որ հաղորդակցական հմտություններ ձեռք է բերել աշխատելու ընթացքում՝ սեփական փորձի հիման վրա, այլ ոչ թե բուհում կամ վերապատրաստման դասընթացներին: Ուստի, պետք է կիրառել միջոցներ հաղորդակցական կարողությունների և հմտությունների բացահայտման հիմքերը դպրոցական ու բուհական ուսուցման տարիներին ձևավորվելու համար:

Մեր օրերում ուսուցիչը տեղեկություն հաղորդողից վերափոխվել է ուսուցման գործընթացի կազմակերպչի: Ինչպես արդեն նշել ենք, տեղեկատվական գիտելիքների վրա հիմնված հասարակությունը պահանջում է կրթական նոր մոտեցումներ, ուսումը ձեռք է բերում կարևոր նշանակություն՝ ուսուցանողի նկատմամբ դառնալով էլ ավելի պահանջկոտ: Ուստի, ուսուցչի և աշակերտի միջև հաղորդակցական դաշտը, պետք է կրի որոշակի փոփոխություններ:

Նոր տեխնիկական միջոցները մեծապես որոշիչ տեղ են զբաղեցնում առօրյա կյանքում և կամա թե ակամա դրանք մուտք են գործել կրթություն իրականացնող հաստատություններ: Չնայած դրան, ուսուցիչները շատ հաճախ մեդիան ընկալում են որպես սպառնալիք և մարտահրավեր՝ ուղղված իրենց: Քանզի արդեն այսօր շատ սովորողներ տարաբնույթ մեդիա միջոցների կիրառման հմտությամբ կարող են նշանակալիորեն առաջ անցնել իրենց ուսուցչից: Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչվում է տեղեկատվության եւ հաղորդակցության արդի միջոցների զարգացման եւ տարածման հետ:Նպատակ ունենալով հետազոտել ՀՀ կրթական գործընթացում հաղորդակցման իրականացման նոր միջոցների և առցանց կրթական հարթակների կիրառման հնարավորությունները հանրակրթական գործընթացում՝ ուսումնասիրել ենք Հայաստանում հայտնի ու կիրառվող 4 առցանց կրթական հարթակները՝ dasaran.am, imdproc.am, emis.am կայքերը և google classroom կրթական հարթակը՝ որպես կրթության ուսուցման ժամանակակից մեթոդ:

«Dasaran.am-ի առաքելությունն է կրթական համակարգի թափանցիկության և կրթության մատչելիության արդիական էլեկտրոնային գործիքների միջոցով, անկախ

սոցիալական կարգավիճակից և աշխարհագրական դիրքից, տրամադրել այլընտրանքային ուսուցման հնարավորություն, հեռահաղորդակցման անվտանգ հարթակ՝ Հայաստանի, Արցախի և Սփյուռքի հայ աշակերտների համար»[9]:

Կայքում ուսուցիչները կատարում էին լրացումներ դասավանդած առարկայի հետ կապված՝ նշում դասի թեման, հանձնարարություններն ու գնահատականները, այն տեսնելու հնարավորություն ունեն աշակերտներն ու ծնողները՝ իրենց համար նախատեսված հատուկ գաղտնաբառերով մուտք գործելու դեպքում: Կայքում ստեղծված են առանձին ենթաբաժիններ՝ մրցույթներ, խաղեր, գործում են հանրագիտարան, առողջապահություն ենթամասերը, առցանց անգլերեն սովորելու հնարավորություն: Եվ որ ամենակարևորն է, կայքը հնարավորություն է տալիս աշակերտչ-ուսուցիչ-ծնող հաղորդակցում կազմակերպել զրուցարանի շնորհիվ, որը նմանեցված է հայտնի սոցիալական կայքերի զրուցարաներին և դպրոցից դուրս հաղորդակցման յուրահատուկ ու արդիական հարթակ է:

Կարող ենք փաստել, որ կայքը հնարավորություն է տալիս հետաքրքիր և արդյունավետ ուսուցումն ու հաղորդակցումը համադրել կրթական խաղերի և առցանց մրցույթների հետ, դյուրացում և ամրապնդում է ուսուցիչ - աշակերտ - ծնող կապը: Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր նորամուծություն դժվարությամբ է ընդունվում և հատկապես, ավագ սերնդի կողմից միշտ արժանանում է քննադատության, բայց որ ստեղծված է ինքնակրթության, նոր հմտությունների ու գիտելիքների ձեռքբերման հարթակ, ինչը պահանջում են կրթական բարեփոխումները, փաստ է:

«ԻմԴպրոց» (imdproc.am) կայքը կրթական առցանց միջոց է նախադպրոցական երեխաների, դպրոցականների, ուսանողների, մանկավարժների և ծնողների համար, գործում է 2015 թվականից:

Ներկայումս համարվում է լավագույն կրթական հարթակը տասնյակ հազարավոր դպրոցների համար: Այն նաև լայնորեն կիրառվում է Լատվիայում, ՈՒկրաինայում, Բելառուսում, Գերմանիայում և Ավստրիայում: «ԻմԴպրոց»-ն օգնում է ուսուցիչներին դասավանդման գործընթացում՝ հնարավորություն տալով էլեկտրոնային եղանակով աշակերտներին հանձնարարել դասարանային ու տնային

[9] www.dasaran.am

աշխատանքներ և ստուգել դրանք: Աշակերտների համար այն առաջադրանքների էլեկտրոնային շտեմարան է և անսահման վարժանքների հարթակ:

««ԻմԴպրոց» կայքի էլեկտրոնային շտեմարանը ներկայումս ընդգրկում է առաջադրանքներ 9 առարկաներից, որը Հայաստանում առկա ամենամեծ «խնդրագիրքն» է: Կայքը ուսումնական գործընթացում օգտագործելու դեպքում ուսուցիչը տնտեսում է իր աշխատանքային ժամանակը մոտ 30%-ով»[10]:

Ըստ մեր հարցումների, dasaran.am-ի հետ համեմատ ավելի քիչ ուսուցիչներ ու աշակերտներ են գրանցված այս կայքում, սակայն կարծում ենք առաջիկայում այն ավելի կիրառելի կդառնա:

Վերջին երկու տարում կրթական համակարգում առավել կիրառելի է դարձել «emis.am» կայքը՝«Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը»: Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը ներառում է Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգը, Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (ՄԿԿՏՀ), Նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (ՆԿԿՏՀ), ինչպես նաև կրթության էլեկտրոնային կառավարման այլ գործիքներ:

Կրթական գործընթացը առցանց տիրույթում առավել արդյունավետ կազմակերպման միջոց է համարվում google classroom-ը: Այն Google-ի ստեղծած անվճար վեբ ծառայությունն է, նպատակն է հեշտացնել ուսուցման գործընթացի կազամկերպումը դպրոցներում և բուհերում, գնահատել հանձնարարկանները և պարզեցնել ուսուցիչների և աշակերտների միջև նյութերի փոխանակման գործընթացը: Google Classroom-ը կարելի է ասել վերջին երկու տարում դարձել է կրթական համակարգի ներկան, նրա կիրառումը հեշտացրել է աշակերտների և ուսուցիչների աշխատանքը և իր ձևաչափով նորություն է մեր կրթական համակարգում:

Կարող ենք ասել, որ կրթական հարթակը հնարավորություն է տալիս բարելավել ուսման որակը, ինքնուրույն յուրացնել անհասկանալի ու բարդ թեմաները, ուսուցումը աշակերտների համար դարձնել հետաքրքիր, և իհարկե, համացանցը արդյունավետ կիրառելու հրաշալի միջոց է:

---

[10] www.imdproc.am

ԳԼՈՒԽ 2. ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԽՈՍՔԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԽՈՍՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ցանկացած հաղորդակցում իրենից ներկայացնում է տեղեկատվության փոխանցման և ընդունման գործընթաց: Տեղեկատվությունը փոխանցվում է հաղորդակցման խոսքային՝ գրավոր կամ բանավոր և ոչ խոսքային միջոցների օգնությամբ:

Տեղեկություն հաղորդողը ընտրում է փոխանցվելիք միտքը, գաղափարը, ձևակերպում է այն, ծածկագրում խոսքային և ոչ խոսքային միջոցների օգնությամբ, հաղորդում ստացողին: Ստացողը ապածածկագրում է տեղեկությունը, ճիշտ կամ սխալ ընկալում այն և նույն կերպ հաղորդում պատասխանը: Կրկնելով այս շղթան, կողմերը կարողանում են միմյանց փոխանցել անհրաժեշտ տեղեկությունները:

Նույն կերպ ընթանում է նաև մանկավարժական հաղորդակցումը, որի արդյունավետությունը պայմանավորված է նրանով, թե որքան պարզ ու հստակ է կառուցված խոսքը:

Հարկ է նշել, որ մանկավարժական հաղորդակցման մեջ կարևոր նշանակություն ունեն և՛ խոսքային, և՛ ոչ խոսքային միջոցները, և, որպես կանոն, նրանք հանդես են գալիս միասնաբար՝ լրացնելով միմյանց, մեկը մյուսով փոխարինվելով, նույնիսկ, հակասելով ու հակադրվելով իրար: Ինչպես նշում է Ջ. Ադաիրը. «հենց բառերի և ոչ խոսքային նշանների համադրությունն է մարդկային շփման ամբողջ հարստության հիմքը»[11]:

Հաղորդակցման խոսքային միջոցներն ու դրանցով կազմված խոսքային ներգործությունները առանձնանում են նախ իրենց բովանդակային նշանակությամբ, քանզի հաղորդակցման համընդհանուր միջոցը խոսքն է: Խոսքային հաղորդակցման ընթացքում խոսողը զրուցակցին ոչ միայն հաղորդում է որոշակի տեղեկություն, այլ նրան մղում է դեպի այս կամ այն արարքը, նրան համոզում է ինչ որ բանում, հրամայում է, խորհուրդ է տալիս, կանխում է նրա որոշ գործողությունները և այլն:

Հայ մանկավարժության մեջ հաղորդակցման խոսքային միջոցներն այնքան են կարևորվում դպրոցականի անձի ձևավորման ու զարգացման գործընթացում, որ

[11] Адаир Дж., Эфективная коммуникация. М.: Изд. “Эскимо”, 2006, с. 28.

երեխայի խոսքի զարգացման խնդիրներով զբաղվում է գիտության առանձին ճյուղ՝ հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան:

Ինչպես Ա. Ռեանի կողմից կատարված ուսումնասիրություններն են հաստատում. «Ուսուցչի խոսքային ներգործությունների բնույթը պայմանավորված է նրա հաղորդակցման ոճով, երեխայի նկատմամբ ունեցած վերաբերմունքով, ինչպես նաև մանկավարժական վարպետության մակարդակով»: Ապա Ռեանը հավելում է. «Հեղինակային ոճի դեպքում ուսուցիչը ավելի հաճախ է նկատողություններ անում և հրամայողական տոնով հրահանգներ տալիս: Ազատական ոճի դեպքում դասավանդողը զերծ է մնում կոնկրետ խոսքային ներգործություններից՝ խուսափելով դրանց արդյունքի համար պատասխանատվությունից: Դեմոկրատական ոճով հաղորդակցվող մանակվարժի խոսքային ներգործություններն ուղղված են սովորողների մեջ գործունեության դրական դրդապատճառների ձևավորմանը, հետաքրքրվածության առաջացմանը և նախաձեռնողականության բարձրացմանը»[12]:

Կարող ենք փաստել, որ արդի պահանջներին համապատասխան անձի ձևավորման ու զարգացման հնարավորությունները պայմանավորված են դասավանդողի հաղորդակցման ոճով ու գործիմացությամբ, ինչպես նաև հաղորդակցական ներգործություններով և սովորողի՝ դրան համարժեք հետադարձ կապով կամ հաղորդակցման իրականացման ուղիներով:

Դեռևս անտիկ ու հին ժամանակաշրջաններից է հայտնի, որ հաղորդակցումն ավելի ազդեցիկ ու կատարյալ է դառնում ոչ խոսքային ներգործությունների շնորհիվ:

Մանկավարժական գործընթացում հաղորդակցման իրականացման ոչ խոսքային միջոցների վերաբերյալ առաջին գիտական հետազոտությունները կատարվել են հոգեբանության մեջ 1960-ական թվականներից սկսած ԱՄՆ-ում:

Միայն 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին հոգեբաններ Ն. Ֆլանդերսը, Ե. Պետրովան, Ն. Եֆիմովան և այլք սկսեցին ուսումնասիրել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները կրթական գործընթացում[13]:

Հայ իրականության մեջ ևս հաղորդակցման ոչ խոսքային միջոցների վերաբերյալ ուսումնասիրություններ կատարվել են և՛ հոգեբանության (Ա. Ա.

---

[12] Реан А. А., Психология личности. Социализация, поведение, общение. М.: АСТ, 2007, с. 285-287.
[13] Ефимова Н. С., Психология общения:Учебное пособие. М.: Изд. “ФОРУМ”. 2006, 192 с.

Նալչաջյան, Ե. Գևորգյան, Վ. Կարապետյան,)[14] և՛ լեզվաբանության (Գ. Ջահուկյան, Լ. Հախվերդյան, Ա. Գալստյան)[15] մեջ:

Որպես կանոն՝ մանկավարժական մասնագիտական գրականության մեջ միայն թվարկվում են ոչ խոսքային միջոցների տեսակները, և նշվում է, որ դրանք կարևոր տեղ են զբաղեցնում մանկավարժի մասնագիտական գործունեության մեջ: Այնուհետև սահուն անցում է կատարվում ուսուցչի խոսքային միջոցների մանրամասն քննարկմանն ու հանգեցնում նրանց դերի գերագնահատմանը:

Սակայն ժամանակակից ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մանկավարժական խնդիրների լուծման հարցում ոչ խոսքային հաղորդակցման դերը շատ ավելի կարևոր է, եթե չասենք որոշիչ: Այսպես՝ սոցիալական հոգեբան Ս. Մոսկովիչը գրում է. «Հաղորդակցման գործընթացում որոշիչ դերը պատկանում է հենց հաղորդակցման ոչ խոսքային միջոցներին կամ մարմնաշարժողական գործունեությանը, իսկ փոխներգործունեության մեջ դրանք այնպիսի տեղեկատվություն են հաղորդում, որը չի կարող հստակորեն հաղորդվել խոսքի միջոցով»[16]: Այդ պնդումը հետագայում հաստատեցին շատ հետազոտողներ, նշելով որ հաղորդակցման գործընթացում տեղեկատվության միայն 7%-ն են կազմում խոսքային միջոցները, իսկ մնացած 93 %-ը կազմում են հաղորդակցման ոչ խոսքային միջոցները:

Մեր հայրենակից, Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Ալբերտ Մեհրաբյանը դեռ 1960-ականներին մշակեց 7-38-55% բանաձևը [17], որը նախ զարմացրեց շատերին, հետո բոլոր տեսաբանների կողմից ընդունվեց որպես ոչ վերբալ հաղորդակցության տեսության աքսիոմա (տե՛ս, գծապատկեր 4):

---

[14] Ոչ վերբալ հաղորդակցման գործնական ձեռնարկ:/Ինչ են ցույց տալիս մարդու ժեստերը, միմիկան և պանտոմիմիկան/: Եր., «Զանգակ-97» հրատ., 2001, 88 էջ:

[15] Գալստյան Ա. Վ., Երկխոսությունը ժամանակակից հայերենում: Եր., «Էդինթ Պրինտ» հրատ., 2003, 124 էջ :

[16] Аронсон Э., Эйкерт Р., Социальная психология. СПб.: Изд. “ПРАЙМ-ЕВРОЗНАК”, 2004, с. 57.

[17] http://www.kaaj.com/psych/smorder.html.



Գծապատկեր 4. Ալբերտ Մեհրաբյանի ոչ խոսքային հաղորդակցման բանաձևը:

Ինչպես և պատկերված է գծապատկերում, հաղորդակցության բաղադրիչներն ունեն հետևյալ հարաբերակցությունը.

- ոչ վերբալ հաղորդակցություն կամ մարմնի լեզու -55%,
- ձայնային հաղորդակցություն՝ ձայնի բարձրություն, տեմբր, արագություն, առոգանություն -38%,
- վերբալ կամ խոսքային հաղորդակցություն՝ ընդամենը -7%:

Ըստ այս բանաձևի՝ ոչ վերբալ հաղորդակցությունը զուտ մարմնի կամ ժեստերի «համր» լեզու չէ: Դրան գումարվում է ձայնային հաղորդակցությունը, որը կազմում է ընդհանուր կոնտակտների 38%-ը: Մնում է հաղորդակցության մի չնչին մասը՝ 7 %, որը բաժին է ընկնում խոսքին: Այնպես որ հաղորդակցության վերջնական արդյունքը կախված է նրանից, թե ինչ ենք տեսնում, այլ ոչ թե ինչ եք լսում:

Փաստորեն, ըստ վերջին տարիների ուսումնասիրությունների՝ հաղորդակցման մեջ որոշիչ դերը պատկանում է ոչ խոսքային միջոցներին, բայց ինչպես ցույց են տալիս մեր կողմից իրականացված հարցումները, պնդումը միայն տեսականորեն է ճիշտ, գործնականում այն կիրառելի չէ: Հարցված ուսուցիչների մեծ մասը հաղորդակցման ոչ խոսքային միջոցներին դիմում են միայն երեխաներին սաստելու, նրանց ուշադրությունը կենտրոնացնելու և այլ կարգապահական խնդիրներ լուծելու համար: Հարցվածների մի մասն է միայն կարևորում ոչ խոսքային միջոցների դերը սովորողների անձի զարգացման գործում և կիրառում դրանք կենդանի կրթական գործընթացում: Ավելին՝ նրանք գտնում են, որ կրթական գործընթացում շատ խնդիրներ կարելի է լուծել միայն հաղորդակցման խոսքային ներգործությունների շնորհիվ: Սակայն, բացի կարգապահական, ուշադրության կենտրոնացման և այլ

խնդիրների լուծման հնարավորություններից՝ հաղորդակցման ոչ խոսքային միջոցներն ունեն նաև անձի ձևավորման ու կայացման ավելի լայն հնարավորություններ:

Այսպես, օրինակ, Լ. Վիգոտսկին նշում է. «Կրտսեր դպրոցական տարիքի երեխաներին բնորոշ է իմաստավորված ընկալման զարգացում, որն սկսվում է պատկերային մտածողությունից: Պատկերային մտածողության գործընթացն իրականանում է իրերի նշանակության իմաստավորման հետ» [18] : Այսինքն՝ մանկավարժական հաղորդակցման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն միջոցներին, որոնք նպաստում են կերպարների ու մտապատկերների ձևավորմանը, շարժում երեխայի երևակայությունը: Իսկ դրանք առավելագույնս հաղորդակցման ոչ խոսքային միջոցներն են:

Ժամանակակից ուսումնասիրություններում մշակված են հաղորդակցման ոչ խոսքային ներգործությունների տարբեր դասակարգումներ: Ամենատարածվածը Վ. Լաբունսկայայի կողմից մշակված դասակարգումն է, համաձայն որի «հաղորդակցման ոչ խոսքային միջոցները բաժանվում են 4 խմբի.

1. Տակտիլ-կինեսթետիկ (մարմնաշարժողական)
2. Ակուստիկական (լսողական)
3. Օպտիկական (տեսողական)
4. Օլֆակտոր (հոտառական) »[19]:

Իսկ Ի. Յակովլևն այս շարքին ավելացնում է նաև պրոքսեմիկան (տարածական դասավորություն), էսթետիկական (երաժշտական, գունային և այլն), ֆիզիոգնոմիկական (մարմնի, քթի, աչքերի, շուրթերի ձևն ու չափը), քրոնոմիկան (ժամանակային բնորոշումներ), քապտիկան (մարմնական կոնտակտ), արտեֆակտերը (հագուստ, զարդեր, շպար)[20]:

Կարծում ենք, որ դպրոցականի համար կազմակերպված կրթական գործընթացը պետք է ընթանա հաղորդակցման ֆիզիկական, հոգևոր ու բանական մակարդակներում հավասարապես, և դրանք պետք է գործեն ոչ թե առանձին-առանձին, այլ միասնաբար ու միմյանց լրացնելով:

---

[18] Выготский Л. С., Психология развития ребенка. М.: Изд. “Эксмо”, 2005, с. 182.
[19] http://www.gumer.info/bibliotek_Buks/Psihol/belin/08.php .
[20] Яковлев И. П., Ключи к общению. Основы теории коммуникации. СПб.: Изд. “Авалон”, 2006, с. 79.

20-րդ դարի հայտնի մանկավարժ, փիլիսոփա և հոգեբան Ռ. Շտայները համարում էր, որ «Միայն մտաբանական ուղիներով դասավանդման փորձերը դատապարտված են անհաջողության: Իսկ եթե բացատրությունները զուգակցենք կերպարների հետ, որոնց ստեղծմանը մասնակցում է նաև երեխան, ապա նա կստանա այն, ինչ անհրաժեշտ է»[21]: Մանկավարժական հաղորդակցման մեջ նման կերպարների ստեղծմանն են ուղղված նաև գեղագիտական ոչ խոսքային միջոցները: Վերջինների շարքում սովորողի անձի ձևավորման ու զարգացման հարցում չափազանց կարևորվում է երաժշտությունը, այն կարգավորում է վարքը, ակտիվացնում կամ դանդաղեցնում է կոնկրետ գործողությունների կատարումը:

Հաղորդակցման ոչ խոսքային գեղագիտական միջոցներից գունային ներգործությունները կարևոր նշանակություն ունեն սովորողի մոտ կերպարների, մտապատկերների ստեղծման տեսանկյունից: Գույներն ու վառ կերպարները խթանում են երեխայի մտածողությունը, երևակայությունը, նպաստում են ընկալմանն ու մտապատկերների ներկայացմանը: Գեղագիտական ներգործությունների թվին կարող ենք դասել նաև ձեռագիրը, հագուստը, որոնք խոսում են հաղորդակցի, նրա հաղորդակցման յուրահատկությունների մասին:

Առանձին խմբի մեջ է դիտարկվում տեսողական նշանային համակարգը, որում հարկ է առանձնացնել հատկապես դեմքի արտահայտությունները և հաղորդակցման տարածական կազմակերպումը: Կրթական գործընթացում սովորողների վրա մեծ հուզական ներգործություն են ունենում մանկավարժի դեմքի արտահայտությունները, ապացուցված է, որ մարդը գիտակցաբար կամ ենթագիտակցաբար ընդօրինակում է դեմքի այն արտահայտությունը, որն հաճախ է տեսնում:

Ինչպես և մեր դիտումների արդյունքում պարզեցինք, հետևելով ուսուցչի աշխատանքին՝ կարելի է նկատել, որ նրա համար ամենահաջող շփման գոտին առաջին նստարաններն են: Առջևի նստարաններին նստում են ամենասիրված կամ լավ սորովող աշակերտները, վերջին նստարաններին՝ հակառակը: Առաջին նստարաններին նստող աշակերտների հետ ուսուցիչը ավելի մտերմիկ հաղորդակցման մեջ է: Արդյունավետ կրթական հաղորդակցման իրականացման

[21] Հակոբյան Ն., Գևորգյան Ս., և ուրիշներ, Մանկավարժական հաղորդակցում: Երևան, հեղինակային հրատ., 2010, էջ 107-108:

տեսանկյունից կարևոր է, որ մանկավարժներն ունենան հավասար դիրքորոշումներ բոլորի նկատմամբ, որպեսզի բոլորն իրենց գնահատված զգան, ձևավորվի համագործակցային մթնոլորտ:

Հաղորդակցումն ավելի արդյունավետ դարձնելու համար կարելի է հաճախ փոփոխել երեխաների տեղերը, վերադասավորել դասարանի կահավորանքը:

Լսողական նշանային համակարգը ներառում է ձայնի հնչողությունը, տեմբրը, հուզական երանգավորումները, տոնը, հնչերանգը, բարձրությունը, ինչպես նաև էքստրալեզվական միջոցները՝ խոսքային դադարները, ծիծաղը, լացը, հազը և այլն: Ձայնի հնչերանգի կառավարումը, հարալեզվական ու էքստրալեզվական միջոցների հնարամիտ համադրումը դասավանդողի հաղորդակցման արվեստի բաղկացուցիչ մասն են:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ հաղորդակցման խոսքային ուղիով փոխանցվում է «տեղեկատվություն», իսկ ոչ խոսքայինով ներգործություններով՝ վերաբերմունք: Ուստի, մանկավարժական հաղորդակցման գործընթացում սովորողներին ուղղված խոսքային ներգործություններով և նրա ոչ խոսքային վարքի կազմակերպմամբ է պայմանավորվում կրթական հաղորդակցման ու նաև գործընթացի արդյունավետությունը՝ որն էլ նպաստում է անձի ձևավորմանն ու զարգացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մանկավարժական հաղորդակցման կազմակերպումն արդի կրթական համակարգում՝ ժամանակակից միջոցների ու պայմանների համատեքստում» թեմայով մեր կատարած ուսումնասիրությունների և հետազոտական աշխատանքի արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Մանկավարժական հաղորդակցումը ուսումնադաստիարակչական գործընթացում հարաբերությունների հաստատման, կազմակերպման ու զարգացման, աշակերտի և ուսուցչի փոխըմբռնման ու փոխազդեցության բազմաբնույթ ընթացք է, որը ծնվում է համատեղ գործունեության նպատակներից: Անընդհատ վերափոխվող և զարգացող սոցիալական փորձը, իրականացվող կրթական բարեփոխումները պարտադրում են հաղորդակցման նոր մանկավարժական հիմքերի մշակում ու նոր տեխնոլոգիաների կիրառում՝ ազգային մտածելակերպին և հասարակական պահանջներին համարժեք՝ ներառելով նաև եվրոպական ու ամերիկյան դպրոցների հարուստ փորձը:

2. Ժամանակակից գիտելիքահեն և տեղեկատվական հասարակության պահանջներից է բխում ինքնազարգացող անձի ձևավորումը, որը պայմանավորված է կրթական համակարգում՝ հատկապես դպրոցում, հաղորդակցման համարժեք մոդելի գործառնությունից:

3. Մանկավարժական հաղորդակցումն իրականացվում է ոչ լիարժեք և կրթական պահանջներին ոչ բավարար կերպով, իսկ հաղորդակցման ժամանակակից միջոցները կիրառվում են ըստ հնարավորությունների:

4. Արդի հասարակական պահանջներով ձևավորված է կրթական համակարգում մանկավարժական հաղորդակցման նոր՝ «կողմորոշող սուբյեկտ-ինքնազարգացող սուբյեկտ» մոդելի գործառնության անհրաժեշտություն, որը, փաստորեն, չունի կիրառության անհրաժեշտ պայմաններ ՀՀ կրթական համակարգում, մասնավորապես հանրակրթության ոլորտում: Դպրոցում այսօր գերիշխում է սովորողներին պատրաստի գիտելիքներ մատուցելու մոտեցումը, այլ ոչ թե սովորողներին գիտելիքների կառուցմանը մասնակից դարձնող ուսուցումը:

5. Այսօր ուսուցչի և աշակերտի միջև հաղորդակցումը չի սկսվում ու ավարտվում դպրոցում: Հայաստանում առցանց հարթակում ինքնակրթության, նոր

հմտությունների ու գիտելիքների ձեռքբերման, հաղորդակցման կազմակերպման հարթակները (dasaran.am, imdproc.am, emis.am, google classroom) քիչ թե շատ համապատասխանում են կրթական բարեփոխումների պահանջներին, բայց թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտերի շրջանում դժվարությամբ են մտնում կիրառության մեջ: Պատկերն այլ է սոցիալական կայքերում, որոնցից գրեթե բոլորն օգտվում են և՛ գործընկեր-դասընկեր, և՛ ուսուցիչ-աշակերտ շփումներում, հաղորդակցման նպատակով ամենակիրառելին էլ՝ Facebook.com-ն է: Հարկ է նշել, որ բացի հաղորդակցումից, աշակերտների և ուսուցիչների մեծամասնությունը համացանցը կիրառում է նաև նոր գիտելիքներ ու մասնագիտական հմտություններ ձեռք բերելու նպատակով:

4. Բացահայտելով մանկավարժական հաղորդակցման իրականացման ժամանակակից պայմանները ՀՀ հանրակրթության գործընթացում՝ առանձնացրել ենք նաև ոլորտի հիմնախնդիրները.

1) մանկավարժները կարևորում են միայն հաղորդակցման խոսքային միջոցները, իսկ ոչ խոսքային միջոցները կիրառվում են կարգապահական խնդիրներ լուծելու, ուշադրության կենտրոնացման, դասի հետաքրքիր ներկայացման համար:
2) կրթական գործընթացը առաջնորդվում է կոնկրետ չափանիշներին բավարարող անձի ձևավորման գաղափարով:
3) ուսուցիչների մեծ մասը լավ չի պատկերացնում կապը՝ ուսուցման արդյունավետության և հաղորդակցական ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորման միջև:
4) կրթական համակարգում հաղորդակցման արդյունավետ կազմակերպման և իրականացման պայմանների բարելավման համար բավարար չեն հաղորդակցման նոր մանկավարժական հիմքերի մշակումը:

Որպես հիմնախնդիրների լուծման եղանակներ ներկայացնում ենք հետևյալ առաջարկները.

1) ոչ խոսքային միջոցները պետք է ձևավորվեն ու զարգանան սովորողների մոտ ուսումնական գործընթացի ժամանակ, մանկավարժն էլ այդ գործում պիտի իր մեծ դերն ունենա: Ինչպես տեսաբաններն են պնդում, երեխայի

հաղորդակցության վերջնական արդյունքը կախված է նրանից, թե նա ինչ է տեսնում, այլ ոչ թե ինչ է լսում:

2) ուսուցման գործընթացը պետք է միտված լինի ներքին բոլոր հնարավորությունների լիարժեք բացահայտման, իրացման և անընդհատ զարգացման ձգտող անհատականության կայացմանը:
3) երեխայի հաղորդակցական ակտիվության խթանումն ու զարգացումը պետք է սկսել դպրոցական տարիքում, որովհետև այդ տարիքում են արտահայտվում անձի ինքնադրսևորման հնարավորությունները, որոնք կախված հաղորդակցման պայմաններից՝ կարող են բացահայտվել կամ սահմանափակվել ու այլևս չդրսևորվել ամբողջ կյանքի ընթացքում:
4) մանկավարժների սերնդափոխության, վերապատրաստման դասընթացների անցկացմանը զուգահեռ անհրաժեշտ են համակարգային բարեփոխումներ գործնականում՝ կրթության կազմակերպման ամենավերին օղակներից մինչև հանրակրթություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանյան Ա. Ս., Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում: Եր., ԵՊՀ հրատ., 2015, 263 էջ:

2. Գալստյան Ա. Վ., Երկխոսությունը ժամանակակից հայերենում: Եր., «Էդինթ Պրինտ» հրատ., 2003, 124 էջ:

3. Գևորգյան Ս., Հաղորդակցման հիմնահարցը հասարակական գիտակցության զարգացման պատմության մեջ: Գիտ. հանդես, N 3-4, Զանգակ-97 հրատ., 2004, էջ 89-94:

4. Թոփուզյան Ա., Երեխայի ինքնազարգացման հումանիստական պայմանները: «Մանկավարժական միտք» գիտական հանդես, N 4, Եր., «Զանգակ-97» հրատ., 2005, էջ 38-43:

5. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: 20-րդ դարի մանկավարժական տեսություններ: Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար: Եր., «Նոյյան տապան», 2005, 407 էջ:

6. Լեոնտև Ա. Ա., Մանկավարժական հաղորդակցում: Եր., «Լույս» հրատ., 1982, 80 էջ:

7. Կրթական վերափոխումները Հայաստանում: Մարդկային զարգացման ազգային զեկույց-2006: Երևան, 2007, 126 էջ:

8. Հայ մանկավարժներ (19-րդ դար): Կազմող և խմբագրող՝ Շավարշյան:, Եր., Հայպետուսմանկհրատ., 1961, գիրք Բ 781 էջ:

9. Հանրակրթական պետական կրթակարգ: Երևան, «Անտարես» հրատ., 2004, 72 էջ:

10. Մանկավարժության պատմության քրեստոմատիա. Անտիկ դարեր.Միջին դարեր. Նոր դարաշրջանի սկիզբ: Մանկավարժական բարձրագույն դպրոցների համար/ Կազմեց՝ Ի. Ֆ. Ակադովսկի, 1-ին հատոր: Երևան, 1936, 388 էջ:

11. Ն. Հակոբյան, Ս. Գևորգյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Դավթյան, Մանկավարժական հաղորդակցում, հեղինակային հրատ., Երևան, 2010, 202 էջ:

12. Ոչ վերբալ հաղորդակցման գործնական ձեռնարկ:/Ինչ են ցույց տալիս մարդու ժեստերը, միմիկան և պանտոմիմիկան/: Եր., «Զանգակ-97» հրատ., 2001, 88 էջ:

13. Ռուսո, Ժ. Ժ., Էմիլ կամ դաստիարակության մասին: Առաջին մաս: Եր., Հայպետուսմանկհրատ, 1960, 611 էջ:

14. Վարդումյան U. S., Մանկավարժության պատմություն: Հնագույն շրջանից մինչև Վերածնունդ: Ուս. ձեռնարկ: Հեղ. հրատ., 2008, 164 էջ:

15. Адаир Дж., Эфективная коммуникация. М.: Изд. “Эскимо”, 2006, 320 с.

16. Алферов А. Д., Психология развития школьников: Уч. Пособие. Ростов н/Д: Изд.”Феникс”, 2000, 384 с.

17. Аронсон Э., Эйкерт Р., Социальная психология. СПб.: Изд. “ПРАЙМ-ЕВРОЗНАК”, 2004, 560 с.

18. Бодалев А. А., Психология общения: Избранные психологические труды. М.: Московский психолого- социального институт, 2001, 256 с.

19. Выготский Л. С., Психология развития ребенка. М.: Изд. “Эксмо”, 2005, 512 с.

20. Ефимова Н. С., Психология общения:Учебное пособие. М.: Изд. “ФОРУМ”. 2006, 192 с.

21. Ильин Е.П., Мотивация и мотивы. СПБ: Изд. “Питер”, 2006, 512 с.

22. Коменский Я. А., Избранные педагогические сочинения. М.: Гос. учебно-педагогическое издательство министерства просвещения РСФСР, 1955, 651 с.

23. Макаренко А. С., Коллектив и воспитание личности. М.: ”Педагогика”, 1972, 336 с.

24. Реан А. А., Психология личности. Социализация, поведение, общение. М.: АСТ, 2007, 407 с.

25. Яковлев И. П., Ключи к общению. Основы теории коммуникации. СПб.: Изд. “Авалон”, 2006, 240 с.

26. http://www.gumer.info/bibliotek_Buks/Psihol/belin/08.php

27. http://www.kaaj.com/psych/smorder.html

28. http://www.magmamater.cl/MatheComm.pdf

29. http://pracownik.kul.pl/files/37108/public/Lasswell.pdf

30. https://wikipedia.org/wiki/John_D._Rockefeller

31. https://wikipedia.org/wiki/Ray_Birdwhistell